

3917

3918

3919

3920

891-995

2-15

Heer

of. *Musculi frontalis*



891.71

12-

Օ. Ռօզոնի

ԱՇԽԷՆՆ

ՈՒ

ՄԱՐԳԱՐԻՏԵ

Թարգմ. ռուսերէնից:

Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպար. Յ. Մարտիրոսիանցի. | Типогр. Н. Мартиросианца.

Орбелиановская ул. № 1 | 2.

1896


3187

Дозволено цензурою. Тифлисъ, 25-го апрѣля 1896 года.

ԱՇԽԷՆՆ

ՈՒ

ՄԱՐԳԱՐԻՏԷ



Ա

երջնատան ցածիկ սենեակում մի փոքր աղջիկ եռանդով բանի էր նստած: Դա մի նիհար, գունատ, թուխ դեմքով, խոշոր, կարմրաթուխ աչքերով ու

սևափայլ գանգուր մաղերով երեխայ էր: Նրա հայրը իտալացի էր և վաղուց մեռած:

Աղջիկը նոր էր ոտը տասը տարում դրել, բայց երեսհարքին նայողը կրկարձէր, թէ եօթ տարեկան է: Յատակի և սեղանի վրայ թափուած էին կարդոնի և գունաւոր թղթի կտորներ. մի կողմը դրած էր մկրատը, միւս կողմը սոսնձի պռեխիկ ամանը և շրէշի փոքրիկ կաթ-

սան: Նեղլիկ պատուհանից ապրիլի տաք արևը ներս էր ընկել և լուսաւորել սեղանի վրայի փայլարէ լուսամուտներ ունեցող նախշուն տնակները, նոր սոսնձած և դեռ չցամաքած կարդոնէ կահ-կարասիքը, որոնք կարմիր թղթէ նստարաններ և ոսկեգոյն ափներ ունէին. լուսաւորուել էին նոյնպէս բարձրապարիսպ կիսաւարտ աշտարակը, կարդոնէ ոսկեգոյն թնդանոթը և էլի միքանի մանր-մունր բաներ: Աղջկայ բոլոր ուշք ու միտքը ճարտարաշէն շրջանակների, կիսաշրջանակների ու զանազան ձևերի վրայ էր. նա հասարակ թղթից շինած օրինակը կպցնում էր կարդոնին, մատիտով նշան անում, մեծ-բերան մկրատով կտրում և բոլոր կտրտածները ուշի ուշով մի տեղ դարսում. յետոյ ձեռք մեկնում մուգ դունաւոր թղթին ու սոսնձին:

Կարդոնի և գունաւոր թղթի կտորները նրա ժիր մատների տակ կամաց-կամաց դառնում էին չորստեղանի կառք. առաջ կառքի արկղն էր երևում, յետոյ կառավարանի նստելու տեղը, իսկ վերջն էլ անիւներն ու նստարանը: Երևում էր որ աղջիկն շտապում էր. շուտ-շուտ

դռանն էր աչք ածում: Նա մօրն էր սպասում, որ լուսաբացին խաղալիկներով լիքը կողովը ձեռին գնացել էր վաճառելու: Այդ օրը Ծաղկազարդի երկուշաբթին էր: Մայրը խոստացել էր՝ որ ժամը չորսին յետ կըդառնայ. հիմա հինգը լրանալու վրայ էր, եկեղեցու զանգակներն արդէն տուել էին. իսկ մայրը չկան ու չկան: Աղջիկը մօտեցաւ պատի պահարանին, մի կտոր հաց հանեց ափսոսելից, աղ ցանեց վրան որ ուտի, այդ միջոցին նախասենեակում ոտնաձայն լսուեց և աղջկայ մայրը՝ Եղիսաբէթը տուն մտաւ:

Եղիսաբէթը մի նիհար ու բարձրահասակ կին էր. նրա ալեխառն մազերին և կնճռոտ դէմքին նայողը կըկարծէր՝ թէ պառաւ կնիկ է, այն ինչ դեռ քառասուն տարին նոր էր բոլորում: Նրա բան ու գործն այն էր, որ առաւօտից մինչև երեկոյ խաղալիկները ձեռին շրջում էր փողոցէ փողոց, ինչ եղանակ էլ լինէր— անձրև, ձիւն, սառնամանիք— նրա համար միևնոյն էր: Ինչ ասել կ'ուզի, որ հեշտ բան չէր. բայց ցաւն այն էր, որ այդ աշխատանքով չէր կարողանում այնքան վաստակել, որ ուզած ժամին ցամաք հաց գնէր:

— Մայրիկ ջան, ինչո՞ւ այդքան ուշացար, հարցրեց աղջիկը, բերնի հացը ծամելով, և բլթերի վրայ բարձրացաւ, որ նայէ՝ շատ է ծախել մայրը: Կողովը համարեա դատարկ էր:

— Ի՞նչ անէի, Աշխէն ջան. ուշացայ որ աւելի շատ ծախեմ. այսօրուայ օրը ձեռք չի ընկնիլ, խելք ունեցողը պէտք է շտապի:

Աղջիկը ձեռի գործն շտապով սեղանի մի կողմը դրեց, մնացած մասի վրայ սիւռոցի նման մի բան փռեց, դեռ աղամանը դրեց, ապա մի երկու կտոր հաց և յետոյ դուրս վազեց ու մի ամանով տաք-տաք սնկէսպաս բերեց:

— Ա'պրի իմ աղջիկը. այդ ո՞ւմ մօտ տաքացրիր, որ կրակ չես արել:

— Մեր հարեւանի տանը տաքացրի, մայրիկ. նա այսօր լուացքատանը շոր էր լուանում. քո դնալուց յետոյ մեր սպիտակեղէնը տարայ ու լուացի. հարեւան կնիկը չբարկացաւ. սապնաջուր ու մոխրաջուր շատ ունէր, ուրիշի համար լուացք էր անում:

Այսպէս շարունակ խօսելով՝ եկաւ աղջիկը, նստեց մօր կողքին, սեղանի մօտ: Մայրը գլխի շարժումով հաւանութիւն էր տալիս աղջկայ

ասածներին, այնպէս յոգնել ու քաղցել էր, որ իսկի խօսելու սիրտ չէր մնացել:

— Այս ի՞նչ բան է, մայրիկ, որ ջրաղացները հիմա քիչ են վաճառում. երէկ տարածիլդ կէսը ետ էիր բերել, այսօր էլ նոյնպէս...

— Յետոյ, հոգիս, յետոյ. թո՛ղ դեռ մի կտոր հաց ուտեմ. այսօր շատ խօսելուց լեզուս յոգնել է:

Աշխէնը ստիպուած սուս կացաւ: Նրա սիրտը շատ էր ուզում խօսել. ամբողջ օրը՝ առաւօտեան ութ ժամից նա մեն-մենակ նըստած էր. անպիտան փիսօն անգամ գնացել էր դրօսնելու, իսկ Աշխէնը քիթ սրբելու ժամանակ էլ չէր ունեցել, ուր մնաց թէ գրօսնէր: Նա գիտէր որ մայրը դադրած տուն եկած ժամանակ չի սիրում, որ իրան հակառակուեն:

Մայր ու աղջիկ հաց ուտելը լուռ ու մունջ վերջացրին: Աշխէնն անխօս վերկացաւ, ամանները վեր քաղեց և կրկին նստեց սեղանի մօտ: Մայրն աչքի անցրեց նրա աշխատանքը, երկուերեք տեղ, ուր մաքուր չէր սոսնձած, թաց շորով աւելորդ սոսինձը պոկեց և յետոյ ինքն էլ մատիտը, կարգոնը և մկրատն առաջ քաշեց:

— Դէհ, աղջիկս, ուրախ-ուրախ ասաց

մայրը, մի ծուլանար, արի տեսնենք, ով առաջ կ'ընկնի:

Ներկուսն էլ աշխուժով գործի կացան. մայրն արագ ու ճարտար կերպով սոսնձում էր, թուղթը կտրում և նորից սոսնձում: Նրա ձեռից ինչ խաղալիկներ ասես, որ չէին յօրինւում ու դուրս գալիս—դաստակերտներ, տնակներ, պալուսակներ, գլխարկներ, ճօճեր:

Աշխէնն ամենայն ճիգ թափում էր, որ մօրից յետ չմնայ. նրա թուխ դէմքը եռանդով աշխատելուց կարմրատակել էր. իսկ ճակատի վրայ պսպղում էին քրտինքի խոշոր կաթիլները: Այդ օրը նա շատ էր յոգնել:


— Դու որ հանգստանայիր, լաւ կրլինէր, ասաց մայրը, ես կըվերջացնեմ, դու գնա, քնիր, սիրելիս:

— Ոչ, մայրիկ, թող վերջացնեմ, ես գեռ չեմ յոգնել:

Նրա արագաշարժ մատիկները նորից գործի կացան: Այնքան աշխատեց փոքրիկ Աշխէնը, որ աչքերն ու ձեռներն իսպառ յոգնեցին: Մայրը՝ որ երբեմն-երբեմն աչքի տակով նայում էր աղջկան, նկատելով նրա յոգնածութիւնը՝ ասաց.

— Աշխէն, քեզ ասացի, որ գնաս քնես, անքնութիւնից թուղթն էլ կըվիջացնես, առանց քեզ ես էլ կըվերջացնեմ. դէ գնա:

Աղջիկը կտորները մի տեղ ժողովեց, նոր վերջացրած բազկաթուռը դրեց սեղանի վրայ և մօրը բարի գիշեր ասելով՝ գնաց: Նշխարէթը նրանից յետոյ այնքան փախաց գործի վրայ, մինչև սեղանի երեսը լցուեց խաղալիկներով: Այն ժամանակ միայն վեր կացաւ, յօրանջելով ճիմկոտաց, բոլոր պատրաստածը խնամքով դարսեց կողովի մէջ, վրան մի շոր փռեց ու ինքն էլ գնաց քնելու:



Բ



Իւս օրը Աշխէնը դարձեալ նստած՝ եռանդով ստանձնում, կպցնում էր տեսակ-տեսակ կարգոնէ բաներ: Աղանակն ամպոտ էր ու անձրև-ալին. այդպիսի օրերին Աղշէնը տխուր էր լինում, որովհետև նրանց ներքնատան մրաթաթախ, գորշ պատերը շատ խաւար էին երևում: Այդ միջոցին դուռը յանկարծ բացուեց: Աշխէնը շուռ եկաւ. նրա աչքովն ընկաւ մի խուճուճ, շէկիկ զլուխ, յետոյ տեսաւ որ մի իննը տարեկան աղջիկ անվստահ կերպով տուն մտա՝ հագին մեխակի գոյն բրդէ շոր, սև գոգնոց, ուսերին էլ գցած ասղնեգործ վզնոց:

Նա ուզում էր բան հարցնել, բայց խաղալիկները տեսնելով մնաց սառած, սենեակի մէջտեղը բերանաբաց կանգնած:

— Ա՛խ, այս ի՛նչ լաւ բաներ են, հրճուանքով ասաց նա և մօտեցաւ սեղանին:

Աշխէնն ուրախ ժպտաց և մինչև ականջի տակը կարմրեց:

— Այս բոլորը դո՛ւ ես շինել, հարցրեց եկողը:

— Ես էլ, մայրիկս էլ, պատասխանեց Աշխէնը. ի՛նչ է, հաւանում ես:

— Ի հարկէ. այդպիսի խաղալիկներ, ես տասը տարի էլ մնամ, չեմ կարող շինել: Այդ տեսակները միայն մեծ-մեծ խանութներումն եմ տեսել:

— Մայրիկս էլ այս խաղալիկները հէնց այնտեղ է տանում վաճառելու:

— Ուրեմն դու այս վաճառելո՛ւ համար ես շինում, հարցրեց եկող աղջիկը՝ նոր ստանձած մահճակալը դնելով. — Ի՛նչպէս ես կալողանում այսպէս բաներ շինել, չէ՞ որ դու փոքր աղջիկ ես:

Այս ասելիս հիւրն այնպէս նայեց Աշխէնի վրայ, կարծես նրա գլխի մեծը լինէր:

— Ի՛նչո՛ւ եմ փոքրիկ, շուտով տասը տարիս կըլրանայ, միայն բոլրս է կարճ, նրա խօսքից քիչ քիչ նեղացած պատասխանեց Աշխէնը և նորից կարմրատակեց:

— Ուրեմն դու ինձանից մի տարով մեծ ես. իմ իննը տարին նոր լրացաւ:

— Դու ճրտեղ ես ապրում, հարցրեց Աշխէնը:

— Մենք երրորդ յարկումն ենք կենում, մայրս ինձ ներքեւ ուղարկեց լուացարարի մօտ, որ...

— Հա, իմացայ. ուրեմն դու սխալմամբ ես այստեղ եկել. լուացարարը մեր դիմացն է կենում:

— Ես կըզնամ եւ ուրիշ անգամ էլի կըզամ քեզ մօտ, անվստահ ասաց աղջիկը, դառնալով դէպի դուռը:

— Կարող ես գալ, ինչո՞ւ չէ, միայն թէ մինչեւ ճաշ, այդ ժամանակները ես միշտ մենակ եմ լինում:

— Առաւօտները ես ուսումնարան եմ գնում, իսկ ժամը երեքից յետոյ ազատ եմ, այն ժամանակ չի՞ կարելի:

— Ոչ, ժամը երեքին ես ու մայրս ճաշում ենք, իսկ երեկոյեան գործի ենք նստում:

— Եթէ այդպէս է, չորեքշաբթի կըզամ. այդ օրը մեզ վաղ են արձակում:

Աղջիկը ծլկեց, իսկ Աշխէնը աւելի եռանդով սկսեց աշխատել:

Գ



Չորեքշաբթի օրը Աշխէնն անհամբեր սրտով սպասում էր իւր նոր ծանօթին. մինչեւ անգամ քիչ էլ բարկանում էր ուշանալու համար: «Ա՛յ, տեսնո՞ւմ ես, ասաց կըզամ ու հիմա չի գալիս», մտածում էր աղջիկն ու աչքը դէպի դուռը պահում: «Կարելի է նա անպէս ասաց, երևի չի գալ», մտածեց Աշխէնը և նրա աչքերն արտասուքով լցուեցին:

Նա դեռ աչքերը չէր սրբել, որ դուռը յանկարծ կրնկի վրայ բացուեց և աղջիկը կարմրած, ուրախ ժպիտն երեսին ներս վազեց. — Տես, խօսքիւ տէ՛րն եմ թէ չէ, ասաց նա շեմքից և վաղելով դէպի Աշխէնը, վզովը փաթաթուեց ու պինդ համբուրեց:

— Այդ ի՞նչ է. ինչո՞ւ ես լաց եղել:

Ինչքան էլ նա ստիպեց, Աշխէնը չասաց

խակական պատճառը, աշխատելով հաւատացնել,
որ հէնց այնպէս՝ տխրելուց, լաց է եղել:

Քայց հիւրը խնդրում էր շարունակ.

— Ասա՛, հաւատացնում եմ՝ ոչ ոքի չեմ ասիլ:

— Ո՛չ, ո՛չ, հոգիս. եօթը տարի էլ որ խընդ-
րես, էլի չեմ ասիլ:

Հիւրը ուսերը վեր քաշեց ու ասաց.

— Մի՛ ասիր, շատ էլ հարկաւոր չէ. յե-
տոյ երեսը դարձրեց դէպի սեղանը, ուր նոր
խաղալիքներ էին դարսած՝ տուփիկներ, տա-
ղաւարիկներ, կառք, օրօրոց, պահարան:

— Քո անունն ի՞նչ է, հարցրեց Աշխէնը:

— Մարգարիտ. իսկ քո՞նը:

— Իմը՝ Աշխէն է:

— Աշխէն. քո անունը շատ լաւն է, ոչ
մի ընկերուհի չունիմ այդ անունով:

— Դու շատ ընկերուհիներ ունիս:

— Ինչպէս չէ. մեր դասարանում տասն ու
հինգ հոգի ենք, բայց ես ամենքին չեմ սիրում:

— Ի՛նչ բախտաւոր աղջիկ ես... տխուր
սրտով ասաց Աշխէնը. իսկ ես ոչ ոքի չեմ տես-
նում, ամբողջ օրերով չորս պատի մէջ փակուած
գործի եմ լինում:

— Ի՛նչպէս, մի՛թէ դու երբէք չես զբօսնում:

— Ո՛չ, այլ մի-մի անգամ, երբ մեր գործը
թեթեւ է լինում, մայրս թոյլ է տալիս որ դնամ
բակում վազվզեմ. բայց այնտեղի տղայքը այն-
պէս չար են, որ ինձ ջղրացնելու համար մի
գլուխ բօշի աղջիկ են կանչում:

— Մի՛թէ դու ուղիղ բօշի աղջիկ ես:

— Ո՛չ, նրանք այդպէս ասում են թխա-
դէմ լինելուս պատճառով:

Աշխէնը գլուխը կախ գցեց և շարունա-
կեց իւր գործը:

Մարգարիտը դրա համար շատ խղճաց Աշ-
խէնին և ասաց.

— Իսկ ես քեզ սիրում եմ, Աշխէն ջան,
և շուտ-շուտ էլ քեզ մօտ կրդամ: Կուզե՞ս, հի-
մա քեզ օգնեմ:

— Դու չես կարող, — կասկածանքով պա-
տասխանեց Աշխէնը:

— Ինչո՞ւ չեմ կարող. հապա՛ մէկ նայիր:

Այս ասելով՝ Մարգարիտը վերցրեց մկրա-
տը, թուղթը, օրինակը, մատիտը և եռանդով
գործի կացաւ:

Քայց գործն այնքան էլ հեշտ չէր, որ-

քան աշխատեց, չկարողացաւ մի խաղալիկի երկու կամ չորս մասերը հաւասար ձեւել. ինչքան էլ ուղղում էր, դարձեալ մի տեղ ծուռն էր դուրս գալիս: Մարգարիտը բոլորովին յոգնեց, կարմրեց և մկրատը սեղանի վրայ ձգելով՝ ասաց.

— Ի՛հ, այլևս չեմ կարող, ինչքան դժուար է եղել: Քո սիրտն ի՛նչպէս է համբերում, որ ամբողջ օրերով այնպէս մլուկ գործի համար նստում ես:

— Ես արդէն սովորել եմ, Մարգարիտ ջան. ինչ արած, հարկաւոր է, ի՛նչպէս չնստեմ, տրիւրաձալն վրայ բերեց Աշխէնը:

— Ի՛նչպէս թէ հարկաւոր է. մայրդ է ստիպում քեզ, կարեկցաբար հարցրեց Մարգարիտը:

— Ո՛հ, ես այդ չեմ ասում. ախր ես ու մայրս սրանով փող ենք վաստակում. եթէ չբանենք, ո՞վ մեզ հաց կըտայ:

— Ինչո՞ւ մայրդ չի նստում ու այս բաներն ինքը շինում:

— Այն ժամանակ ո՞վ կըտանի վաճառելու:

— Թող քեզ ուղարկէ. ման գալն ու վաճառելը դժուար չէ:

Աշխէնը ծիծաղեց:

— Դու էլ բան ասացիր, Մարգարիտ. ինչ հեշտ գործ դտար. դու պէտք է տեսնես՝ թէ մայրիկս ի՛նչպէս յոգնած է տուն գալիս. խեղճը հազիւ է կարողանում ոտքերը քաշ տալ: Այդ իմ բանը չէ. ես մի ժամի չափ կարող եմ այնպիսի կողովը թելիս ման ածել:

Մարգարիտը խոր մտածմունքի մէջ ընկաւ և յետոյ ասաց.

— Իսկ ես կարծում էի՝ թէ այդ աեսակ խաղալիկներ շինելը զուարճութեան պէս մի բան է:

— Բան չունիս, ինչ զուարճութիւն, ինչ բան. սրանք ինձ այնպէս ձանձրացրել են, որ վրաները նայել անդամ չեմ ուզում, տաք-տաք վրայ բերեց Աշխէնը:

— Ապա դու դրանցով իսկի չե՞ս խաղում:

— Ի՛նչպէս թէ խաղամ:

— Օրինակ՝ կարող էիր տնակները դարսել, տիկնիկին կառքով ման ածել, օրօրոցն օրօրել...

Աշխէնը կրկին ծիծաղեց:

— Հա՛, այդ էիր ուզում ասել. ախր խելքդ ինչ է կտրում, Մարգարիտ, կարելի է ծախսու

բաները այդպէս փչացնել, յետոյ էլ ո՞վ կրգնէ մեզանից: Աւելորդ կտորներէց երբեմն ինձ համար բաներ եմ շինում, բայց երբեք խաղալիկի վրայ չեմ մտածում, ինչիս են պէտք: Այ՛ ես աւելի սիրում եմ տուփիկներ, փոքրիկ կախկալներ: Տես, երէկ ինչ սիրուն արկղիկ եմ շինել:

Աշխէնը սեղանի գգրոցից հանեց մի փոքր կոկ արկղիկ, շինած կարմիր ու կանաչ թղթից, ափներն էլ ոսկեգօծ:

Աշխէնն ու Մարգարիտը արկղիկն էին դնում, երբ Եղիսաբէթը ներս մտաւ: Նա դարմացած նայեց հլւրի վրայ:

Աշխէնը վախեցած ասաց մօրը.

— Մայրիկ ջան, սա Մարգարիտն է, սրբանք կենում են այս տան երրորդ յարկումը:

— Դու ո՞ւմ տանիցն ես, ա՛յ աղջիկ, սառը-սառը հարցրեց Եղիսաբէթը:

Մօր սուր աչքն իսկոյն նկատեց, որ Աշխէնը այդ օրը քիչ բան է շինել:

Մարգարիտը, որ բոլորովին շփոթուել էր, այսպէս խօսեց.

— Հալո՞ւ ծառայութեան մէջ է... ես ուսում-նարան եմ դնում... Մեզ Սելիկեան են ասում:

— Այդպէս է, հա՛. ուրեմն աւելի լաւ չէ՞ր լինիլ, ձեր տանը նստէիր. կարելի է քո մայրիկին անախորժ է, որ դու այստեղ, այս խոնաւ ու կեղտոտ ներքնատանն ես:

— Ընդհակառակը՝ ես գիտեմ, որ մայրս ինձ վրայ չի բարկանայ. այստեղ ձեր բնակարանում աւելի ուրախ եմ:

Եղիսաբէթը յօնքերը կիտեց ու ասաց.

— Այ՛ո, դու ուրախանալ ես ուզում, իսկ իմ Աշխէնը գործ պիտի շինի: Յետոյ բարկացած դառնալով իւր աղջկան՝ յանդիմանեց նրան.

— Դու այսօր ինչո՞ւ ես ծուլացել. ինչ ունէինք բոլորը ծախտոտեցի, հապա վաղն ինչ պիտի տանեմ, անշնորհք:

Աշխէնն իրան բոլորովին կորցրեց: Նրա վատ բախտից այդ լուպէին մօր աչքովն ընկաւ Մարգարտի փչացրած ու կիսատ թողած գործը: Այն ժամանակ էլ չհամբերեց և բարկացած գոռաց աղջկայ վրայ.

— Այս ինչ ծուռ ու մուռ ես կտրտել. ըսկսել ես թղթերը դուր փչացնել. կարծում ես՝ զրանց փող չի տուած:

Աշխէնը լռեց, վախնում էր գլուխը բարձ-

րացնել: Մարգարիտն ալլէս չկարողացաւ ան-
խօս մնալ:

— Ի սէր Աստուծոյ, դրան մի նախատէք,
աղաչում եմ, այդ բոլորի մեղաւորը ես եմ. կա-
մենում էի.... կարծում էի.... որ կ'օգնեմ նրան,
բայց շատ դժուար էր, չկարողացայ:

— Այ՛, հէնց դրա համար եմ ասում, որ
այստեղ քո տեղը չէ, մըթմըթալով ասաց Եղի-
սաբէթը. քեզ համար այս բոլորը հանաքներ
են, իսկ մեզ համար դորձ է: Չես իմանում՝ որ
Ծաղկաղարդն անցնելուց յետոյ անդորձ պիտի
մնանք, ձեռներս ծոցներս դրած. ձխը հիմա
ամեն մի ըոպէն թանգ է մեզ համար:

Մարգարիտը փասա-փուսէն հաւաքած զը-
նաց իրանց տուն. Եղիսաբէթը էլ չխօսեց. բայց
Աշխէնը գէմքից նկատում էր, որ մալըր իւր
վրայ խիտ չարացած է: Աղջիկն աշխատանքը
կրկնապատկեց. կարծես նրա մատները իրանք
իրանց թղթի վրայ գնում գալիս էին: Մալըր
մուտքը կիտած սոսնձում էր: Նա այսօր իսկի
քէֆին չէր երևում. թրջուել, զողզողոցն էր
ընկել, յոգնել. այստեղ էլ եկաւ տեսաւ աղջկա-
նը՝ պարապ, անգործ, պակասը լրացմաւ:

Մարգարիտ

Դ



իւս օրը Եղիսաբէթը սովորակա-
նից վաղ զարթեցրեց իւր աղջկան և պա-
տուիրեց որ նա էլ հագնուի:

— Այսօր վաճառելու ապրանք շատ ունինք,
մի թեթեւ կողով էլ դու վերցրու, կտրելի է
մինչև ճաշ բոլորն էլ ծախենք: Այնքան ժողո-
վուրդ է հաւաքւում, որ ասեղ ձգես, գետնին
չի ընկնիլ: Քանի վաղ է, կըծախենք, ճաշից
յետոյ կըզանք և երկուսով մեր գործը կըշարու-
նակենք:

Աշխէնը շատ ուրախացաւ. շտապով հագ-
նուեց, գլխին շալ, վրան էլ բարակ թիկնոց
զցեց: Մի ժամանակ նա վերարկու էլ ունէր,
այժմ կարճ էր գալիս, իսկ ուրիշ նորը գնելու
կարողութիւն չունէին:

Նրանք դուրս եկան տանից: Մի ցուրտ
բայց զեղեցիկ ու պարզ առաւօտ էր: Մեծ հրա-

պարակի առաջ խոնուած էին խաղալիկներ վաճառող շատ կանայք, նրանցից ամեն մինը իւր ասրանքն էր զովում անցորդներին առաջ: Աշխէնն էլ ուրախ արտէս էր կանչում.

— Օրինդդ, բարի օրիորդ, էժան ապրանք, ինձանից գնեցէք: Պարոն, թանգ չէ. նայեցէք, ինչ պատուական թնդանօթ է. զինն ընդամենը տասը կոպէկ. համեցէք, գնեցէք:

Նա առաջին անգամն էր առուտուր անում և գործի մէջ արդէն վարժ էր երևում:

Մի ժամից չետոյ մալըր մօտեցաւ, նայեց նրա կողովին ու զովեց:

— Ապրիս, իմ քաջ Աշխէն, շուտով կողովդ կըդատարկես, բայց տես, որ էժան-էժան չծախես:

— Միանմիտ կաց, մալրիկ, բոլորը քո պատուիրածի պէս եմ ծախում:

— Հէնց այդպէս էլ արն, հոգիս...

Մալրն ասաց ու հեռացաւ: Աշխէնը շատ մըսել էր, տոները ցրտից սառել մօմժում էին: Ինչքան էլ գետնին էր խփում, այս ու այն կողմ վազվզում, հնար չէր լինում. դողը ջանն էր առել, ատամները չխչխկում էին:

Այդ ժամանակ նրա առաջ կանգ առաւ մի մարդ մի խումբ երեխաներ հետը: Երեխաներն սկսեցին խաղալիկները տնդել, մարդը դարձաւ աղջկան հարցրեց.

— Ի՞նչ է, այն աղջիկ, մըսում ես:

— Այն, պարոն, խիտ ցուրտ է:

— Էլի շատ ունիւ ծախելո՞ւ:

— Այս բոլորը, ինչ որ տեսնում էք:

— Այդ բոլորը ինչ կ'արժենայ, ապա հաշուիր:

— Ա՛յ ասեմ. երկու աշտարակ, հատը երեսուն կոպէկ, կ'անէ վաթսուն կոպէկ. հինգ կառք, հատը քսան կոպէկ, այդ կ'անէ մի ուրբի. սրանք էլ մանր-մունր խաղալիքներ են — մէկ, երկու, երեք... տաս. ամեն մինը հինգ կոպէկ, այդ էլ կ'անէ չետուն կոպէկ. բոլորը միասին...

Աղջիկը մտածեց, մտածեց ու չկարողացաւ գումարը դուրս բերել:

Պարոնը ժպտալով ասաց. «Սպասիր ասեմ, բոլորը միասին կ'անէ երկու ուրբի տասը կոպէկ:

— Պէ՛, երեխէք, շուտով սրա կողովը թեթեացրէք, որ տուն վաղէ տաքանայ:

Երեւոյքն էլ հէնց այդ էին ուզում. մի ականթարթում կողովը դատարկեցին:

Աշխէնը վեր-վեր թռչելով՝ մօր մօտ վազեց:

— Մայրիկ, մայրիկ, ես բոլորը ծախեցի, վերջացրի:

— Մի՛ թէ. այդպէս շուտ:

— Մայրիկ ջան, թող ես տուն գնամ, ցրտից մեռնում եմ:

Եղիսաբէթը նայեց աղջկայ վրայ, որի երեսը բոլորովին կապտել էր, ատամներն իրար էին զարկում կ'ասես ջերմի մէջ:

— Գնա՛, մատաղ, դու գնա՛. բայց կարո՞ղ ես ճանապարհը գտնել:

— Կրգտնեմ, մայրիկ ջան, կըգտնեմ:

Աշխէնը ճանապարհին տաշեղներ ժողովեց, երկու կտոր էլ փայտ գտաւ, երեւի մշակի շալակից էին ընկել: Դրանցով տանը կրակ վառեց, ջրով լիք փոքր կաթսան կրակին դրեց ու ինքն էլ մօտը նստեց. գլուխը դնդղնդում էր, իրան ծանր էր զգում. մէկ մըսում էր, մէկ տաքանում:

— Ի՞նչ եղաւ Մարգարիտը, յանկարծ մըտածեց նա, մի՛թէ էլ ինձ մօտ չի գալու: Մայ-

րիկիս կըխնդրեմ, որ էլ չբարկանայ նրա վրայ... բայց չէ՛, վախենում եմ...

Մի ժամ չէր անցել, մայրն եկաւ, տեսաւ կրակի վրայ շէլափլաւը պատրաստ, կաթսայի մէջ էլ առանձին ջուրը եփ գալիս:

— Ա՛յ, ապրի իմ աղջիկը, որ ջուր էլ է եփ տուել: Դու ի՞նչ գիտէիր որ թէ՛յ եմ բերում:

Նրանք շատ սակաւ էին թէ՛յ խմում. բայց որովհետեւ այդ օրը լաւ առուտուր ունեցան, Եղիսաբէթը իրան թուլ էր տուել այդ փոքր շուպլութիւնն անել: Նա արդէն մտքում վրձուել էր, որ ամեն օր իւր հետ վերցնի Աշխէնին, բոլոր ապրանքը վաճառէ, ապա ճաշից յետոյ գալ աղջկայ հետ գործի նստի: Ի հարկէ, այսպիսով նրա գործը աւելի յաջող կ'երթար. իւր աղջիկը, որ տանը նստելուց ձանձրացել էր, այժմ առիթ կ'ունենար դուրս գալ և զարնանային մաքուր օդ ծծել:

Սակայն նրա ծրագիրները փշուռեցին: Աշխէնը ճաշին բան չկերաւ, թէ՛յից երկու-երեք կում հազիւ խմեց, սիրտը խառնում էր, գլուխը ցաւում: Այս ամենը բանի տեղ չդնելով՝ նա փորձեց գործի նստել, բայց քառորդ ժամ չան-

ցած՝ զուռնատուեց և մկրատը ձեռքից վալը ընկաւ: Եղիսաբէթը շտապով զիրին սուաւ նրան և տարաւ մահճակալի վրայ պառկեցրեց: Խեղճ կնիկը սաստիկ վախեցաւ: Ի՞նչ անէր, աչքի սև ու սպիտակ աչք մէկն էր, որին կեանքիցն առնելի էր սիրում: Նա մտաբերեց իւր հիւանդ ամուսնուն, լիշեց նրա դառն մահը. ուզում էր ուրիշ բան էլ լիշել, բայց աղջկայ զուռնատ դէմքին նայելով՝ թողեց անցեալի տխուր լիշատակները... Արտասուքի խոշոր կաթիլները հոսելով՝ ողորդեցին նրա զաւկացած ու խորշոմած դէմքը:



Ե



իւս օրը Աշխէնն այնպէս թուլ էր զգում իրան, որ չէր կարողանում գլուխը բարձից վեր քաշել: Լուսաբացին Եղիսաբէթը վազեց երկու բժշկի մօտ. ոչ մէկին տանը չգտաւ: Չեւիցը բան չէր գալիս, որ ինքն օգնէր, չէր էլ իմանում՝ ի՞նչ է պատահել աղջկան:

Մինչև կէսօրը նստած գործ չէնեց, վաճառելու պիտի տանէր, բայց չէր իմանում՝ հիւանդին ո՞ւմ յուսով թողնի:

Այդ նկատելով Աշխէնը, որ դեռ ուշքը բուրլովին տեղն էր, ցած ձայնով ասաց.

— Մայրիկ ջան, միամիտ կաց, ինձ ոչինչ չի եղել. գնա՛ գործիդ, ժամանակ է:

— Այո՛, ժամանակ է, Աշխէն ջան, բայց քեզ ի՞նչպէս մենակ թողնեմ, գնամ:

— Ոչինչ, անհոգ կաց, մայրիկ, մօտա խմելու ջուր դիր, բաւական է:

—Միքիչ բան կեր, արեւի՞դ մեռնի մայրիկը:

—Զէ, մայրիկ, սիրտս ոչինչ չի քաշում:

Եղիսաբէթը սիրտը պնդացնելով՝ դուրս եկաւ, հարեան լուացարարին աղաչեց, որ մի-մի անգամ տուն մտնի հիւանդին նայէ:

Աշխէնը հանգիստ պառկած էր. աչքերը մէկ-մէկ խփում էր և կիսաքուն եղած՝ խառն ի խառն երագներ տեսնում, երբեմն էլ դէս ու դէն աչք ածում և ջրից կում-կում խմում:

Իրիկնադէմին մայրն եկաւ: Յուսով էր՝ որ Աշխէնը լաւացած կըլինի, բայց ի գո՛ւր. աղջկայ հիւանդութիւնը քանի դնում՝ ծանրանում էր. գիշերն անդադար զառանցում էր. կարծես կրակի մէջ վառուելիս լինէր: Եղիսաբէթը ամբողջ գիշերը չկարողացաւ աչք կպցնել: Առաւօտը վաղ նա վաղեց երրորդ բժշկի մօտ. սա էլ ասաց որ միայն երեկոյեան կարող է այցելել, որովհետեւ հիւանդանոցում օրապահութեան հերթը նրանն է: Եղիսաբէթը լաց եղաւ, չէր իմանում ո՞ր ջուրն ընկնի. ձեռը գործ չէր բռնում և ոչ կարողանում էր հիւանդին աչքաթող անել:

Այդ միջոցին դուռը յանկարծ բացուեց և

երեւաց Մարգարտի դուռը. Եղիսաբէթին տեսաւ թէ չէ՝ շփոթուեց:

—Այդ դո՛ւ ես, Մարգարիտ, մի՛ քաշուիր, առաջ արի, ձայն տուեց Եղիսաբէթը: Նա ուրախացաւ, որ վերջապէս մէկը ներս մտաւ:

Մարգարիտը մտնելուն պէս անխտաճ կերպով հարցրեց.

—Հապա Աշխէնն ո՞ւր է:

—Աշխէնը երեկուանից հիւանդ է, իմ աչքի լոյս. նա հիւանդացաւ ու աշխարհը գըլխիս մթնեց, պատասխանեց Եղիսաբէթը և աչքերից արտասուք թափեց:

Մարգարիտն անկողնին մօտեցաւ և հիւանդի ձեռը բռնեց: Աշխէնն աչքերը բաց արեց ու հարցրեց.

—Մարգարիտ ջան, եկել ես:

Մարգարիտը քիչ մնաց լաց լինէր, երբ լսեց այդ թոյլ ձայնը և նայեց նրա տխուր, սփրթնած երեսին:

—Ի՞նչ է պատահել քեզ, Աշխէն, որ պառկել ես:

—Ա՛խ, Մարգարիտ ջան, մորմոքուելով խօսեց Եղիսաբէթը, աշխարհս քանդուել է, իմ

երեխի համար բժիշկ չի ճարուում. երեքի մօտ գնացել եմ, մեզ պէս աղքատներին մարդատեղ չեն դնում. մնացել եմ տարակուսած:

Մարգարիտը մտածեց, մտածեց ու ասաց.

— Գիտէ՞ք ինչ կայ, այս լոպէիս ես կը վազեմ մեր բժշկի մօտ, իմ եղբայր Պետրոսին էլ նա է բժշկում քութէշից, այժմ արդէն առաջջանալու վրայ է:

— Նա էլ չի գայ, զուր կըլինի գնալդ, կասկածանքով գլուխն օրօրեց Եղիսաբէթը. բայց Մարգարիտն արդէն ծլկել էր, նրա համար ասած ու կատարած մի բան էր: Կէս ժամ չէր անցել, դարձաւ ու իւր հետ բերեց մի երիտասարդ բժիշկ:

— Դէ, փոքրիկ, ո՞ւր է քո հիւանդը, ներքնատունն աչքի անցնելուց յետոյ ուրախ-ուրախ հարցրեց բժիշկը:

— Ահա այստեղ է, պարոն բժիշկ, ասաց Մարգարիտը և տարաւ նրան հիւանդի մօտ:

Բժիշկը կռացաւ քնած հիւանդի վրայ և ուշադրութեամբ գննեց նրա երեսն ու բուկը:

— Աստուած ձեզ երկար կեանք տայ, պարոն բժիշկ, որ մեզպէս խեղճերին մտներդ

էք բերում, խորը գլուխ տալով՝ ասաց Եղիսաբէթը:

— Մոմ չունի՞ք արդեօք, խնդրեմ վառէք, այստեղ մութն է, բան չի երևում, խօսեց բժիշկը:

Խեղճ Եղիսաբէթը մնաց տարակուսած. նրանց տանը ոչ թէ մօմ, այլ մօմի հոտն էլ չկար: Երեկոները նրանք էժանագին ճրագ էին վառում: Նա վաղեց հարևանի տուն և շուտով յետ դարձաւ մի կտոր մօմ ձեռին:

Բժիշկը թէլի գդալ պահանջեց, բայց այդ էլ չկար, նրանք միայն փայտէ մեծ գդալ ունէին:

— Վնաս չունի, փայտէ գդալը բեր, շտապով վրայ բերեց բժիշկը: Յետոյ նստեցրեց աղջկան, Եղիսաբէթին ասաց որ պահի նրան. մօմը տուեց Մարգարիտին, իսկ ինքն սկսեց հիւանդի բուկը գննել:

Ինչպէս երևում էր Աշխէնը չէր զգում թէ ինչ էր կատարւում իւր շուրջը, որովհետեւ ուշքը վրան չէր:

Երկար գննելուց յետոյ՝ բժիշկը շօշափեց հիւանդի բազկերակը, գլուխն օրօրեց, նորից գննեց նրա երեսը, բուկը, ձեռները և կարմիր բծերը ցոյց տալով՝ ասաց.

—Այս բոլորը քութէշի նշաններ են:

Մարգարիտը բժշկի խօսքերը լսելիս՝ հէնց կարծես կայծակնահար եղաւ. նա ճիգ էր թափում որ խօսի, բայց չէր կարողանում մի բառ անգամ արտասանել և լաց եղաւ:

—Ի՞նչ պատահեց քեզ, Մարգարիտ, կարեցաբար հարցրեց բժիշկը:

—Ա՛խ, պարոն բժիշկ, — հեկեկալով ասաց նա, — այդ բոլորի պատճառը ես եմ... միայն ես եմ մեղաւոր....

—Ի՞նչեր ես ասում, հանդարտ ասա՛, տեսնեմ. հանգստացիր, ջո՛ւր խմիր, յորդորում էր բժիշկը:

—Ես.... ես.... եկայ. չէ՞ որ մեր Պետրոսը.... սրա մօտ ես եմ եկել և.... վարակել եմ:

Բժիշկը գլխի ընկաւ և հարցրեց.

—Ա՛խ, այո՛, դու կարծում ես՝ թէ սրա քութէշ ընկնելու պատճառը դու ես հա՛:

—Ի հարկէ՛ ես. Աշխէնն այստեղ ինձանից աւելի ոչ ոքի չի տեսել:

—Չատ կարելի է քո ասածը ճիշտ լինի. բայց դու հանդիստ կաց, ես կ'աշխատեմ սրան առողջացնել:

Եղիսաբէթը լռիկ լալիս էր: Մարգարիտն այդ նկատելով՝ մօտեցաւ նրան և արտասուելով խօսեց.

—Ներեցէք ինձ, աղաչում եմ, ներեցէք, չէ՞ որ ես առանց մտածելու եմ արել այդ բանը:

Եղիսաբէթը ձեռքով շոյեց նրա գլուխն ու ասաց.

—Մի՛ լար, աղջիկս, ի՞նչ արած, երեւի մեր ճակատագիրն այս է. յոյս ունիմ, Աստուած ինձ խղճայ, և Աշխէնն առողջանայ:

Բժիշկը դեղատոմս գրեց և դուրս գալիս խոստացաւ, որ միւս օրն էլ կրգայ:

—Գնացէք դեղ բերելու, մինչև ձեր գալը այստեղ կըսպասեմ, ասաց Մարգարիտը:

—Իսկ քո մայրը, ո՞վ գիտէ, որոնում է քեզ և կարելի է բարկանայ, եթէ իմանայ, որ հիւանդի մօտ ես նստած:

—Ո՛հ, իմ մայրիկը բարի է. քութէշ ես արդէն ընկել եմ, միանմիտ եղէք, ես կըհսկեմ:

Եղիսաբէթը վազեց դեղ բերելու և երբ վերադարձաւ Մարգարտին համոզեց որ տուն գնայ:

—Լաւ, կ'երթամ, բայց վաղը մայրիկիցս իրաւունք կ'առնեմ, որ ամբողջ օրն այստեղ մնամ:

—Ո՛հ, ինչ բարի սիրտ ես ունեցել, անգին աղջիկ, ասում էր Նդիսաբէթը Մարգարտին ճանապարհ դնելիս:



Ե



արգարիտը շաբաթ առաւօտ կանուխ եկաւ մի կողով ձեռին:

—Ա՛յ, ես մայրիկիս ինզրեցի, և նա թոյլ տուեց որ ձեզ մօտ մնամ, միայն թէ ճաշին չուշանամ. մենք ժամը չորսին ենք ճաշում: Հէնց որ երեկոյեան զանգակները կըտան, ես տուն կըվազեմ: Գուք միամիտ գնացէք ձեր առււտրին, ես կըհսկեմ. երէկ էլ չգնացիք, չէ:

—Ո՛հ, էլ մի լիշեցնիր, հոգիս. ո՞վ զիտէ՝ թէ ինչ օրեր պիտի լուսանան դժբախտիս համար, եթէ Աշխենիս հիւանդութիւնը երկար քաշի: Խաղալիկներ վաճառողի խանութից պատուէր եմ վերցրել, զեռ պատրաստ ոչինչ չունիմ, մտածում էի Աւագ-ուրբաթ սկսեմ, ինչ զիտէի թէ կարող է զլուսն ալսպէս բան գալ:

—Դէ, տեսնում էք, ուրեմն գնացէք, զընացէք, շտապեցնում էր աշխույժ Մարգարիտը.

դուք երկիւղ մի ունենաք. հիւանդ պահելու շնորհք ունիմ. շատ անգամ մեր Պետրոսին էլ ես էի հսկում: Եթէ Աշխէնն իրան դարձեալ լաւ չգրայ, իսկոյն կըվազեմ բժշկի մօտ, նա անյապաղ կըգայ:

— Անչափ շնորհակալ եմ քեզանից, անման աղջիկ, մխիթարուելով խօսեց Եղիսաբէթը և պատրաստի խաղալիկները կողովի մէջ դարսեց: Վա՛յ գլխիս, իմ շինած բանն այսպէս քիչ պիտի լինի:

— Տուէք ինձ որեւէ բան շինելու, վրայ բերեց Մարգարիտը, բայց իւր առաջուայ գործը մտաբերելով՝ և՛ ամաչեց, և՛ թախանձեց. — Հիմա կ'աշխատեմ, էլ չեմ փչացնիլ... այսպէս անգործ նստած պիտի լինիմ միւսնոյն է:

— Դու կըյոգնես, իմ աչքի լոյս. ձեռ վերցրու, աշխատանքի սովորելը հեշտ բան չի:

— Աշխատեմ, հաւատացէք, կ'աշխատեմ. թէ Աշխէնին սիրում էք, որեւէ բան տուէք շինելու, աղաչում եմ:

— Լաւ, ահա քեզ պտըտան ջրաղացներ. սրանք դժուար բաներ չեն:

Եղիսաբէթը թուղթը հանեց, Մարգարտին

ցոյց տուեց՝ թէ ինչպէս պէտք է կտրտի, գընդասեղներով ամրացնի և սարքի մետաղի թէլի ու բարակ ճիպոտի վրայ: Մարգարիտը փորձի համար սկսեց մի խաղալիկ նրա առաջ շինել: Եղիսաբէթը համբերութեամբ բացատրում էր և ուղղում, մինչև նա սովորեց: Այն ժամանակ ինքը դնաց, իսկ Մարգարիտը կամաց մօտեցաւ հիւանդի անկողնին: Աշխէնը քաղցր քնած էր: Մարգարիտը ոտի ծալքերի վրայ զգուշութեամբ դարձաւ սեղանի մօտ և գործի նստեց:

Նա այժմ աշխատում էր ոչ մի թերթ թուղթ չփչացնել. շատ կարգին դարձում էր, կտրում, խնամքով հաւաքում բոլոր կտորները տուփի մէջ. թէպէտ գործը դանդաղ էր դնում, բայց շինածները բանի նման էին:

Աշխէնը շարժուեց և գլուխը բարձրացրեց. նրա երեսն ու ձեռները ամբողջովին ծածկուած էին բծերով. աչքերն այրում էին. «մայրիկ» կանչեց նա:

Մարգարիտը մօտեցաւ:

— Աշխէն ջան, մայրիկդ դնաց իւր գործին, ես եմ քեզ մօտ:

Աշխէնն աչքը զցեց ընկերուհու վրայ և

խօսոյն չկարողացաւ ճանաչել. երբ գլխի ընկաւ հարցրեց.

—Ա՛խ, Մարգարիտ ջան, դու այստեղ ի՞նչ ես անում, մայրիկս քեզ վրայ չէ՞ բարկանում:

—Ո՛չ, Աշխէն. այսուհետեւ ես պիտի նայեմ քեզ. ա՛խր՝ դու չգիտես որ քո հիւանդութեան բոլոր պատճառը ես եմ: Եւ սկսեց մանրամասն պատմել:

Աշխէնը շփոթութեան մէջ ընկած՝ լսում էր նրան:

—Հապա դու քութէշից չե՞ս վախենում, Մարգարիտ. որ դու էլ հիւանդանաս, վախեցած հարցրեց նրան:

—Մի՛ վախենար, Աշխէն, ես քութէշ էլ եմ ընկել, կարմրուկ էլ. այդ հիւանդութիւնները չեն կրկնում:

Աշխէնը իւր շուրջը նայեց և կտրտած թղթերը տեսնելով՝ վախեցած բացականչեց.

—Վա՛յ, Մարգարիտ, այդ ի՞նչ է, այս թուղթը դո՛ւ ես կտրտել. մայրիկս հօ կըբարկանայ:

—Այդ մասին անհոգ կաց, մայրիկդ ինքն է տուել թուղթը. քանի որ դու հիւանդ ես՝ նրան ես պիտի օգնեմ:

Աշխէնը ժպտաց և ասաց.

—Ի՛նչ լա՛ւ աղջիկ ես, Մարգարիտ, քեզ շատ, շատ եմ սիրում. Մարգարիտը համբուրեց նրան և ասաց.

—Աշխէն ջան, վեր կենալ չի կարելի, հանգիստ պառկիր, ահա՛ որտեղ որ է բժիշկը կըգայ, իսկ ես գործի նստեմ:

—Մարգարիտ, սաստիկ ծարաւ եմ:

Մարգարիտը շտապով կողովը վերցրեց:

—Ո՛հ, ինչ անշնորհք եմ եղել, քիչ էր մնում մոռանայի. մայրս ուղարկել է օշարակ, սպիտակ հաց, թէ՛յ, շաքար և չորացրած արգանակ, որ հեշտ կարելի է ջրով բաց անել և տաքացնել:

Աշխէնը նորից ժպտաց:

—Մարգարիտ ջան, ուտելու ախորժակ չունիմ, միայն խմել եմ ուզում:

Մարգարիտը ջուր ածեց բաժակը, վրան օշարակ աւելացրեց և խառնեց: Նա հրճուանքով նայում էր՝ թէ ինչպէս Աշխէնը ազահութեամբ կուլ էր տալիս քաղցրահամ խմիչքը:

Ժամը չորսին Եղիսաբէթը տուն եկաւ: Նա գովեց Մարգարիտի շինած ջրաղացները. պակաս

տեղերն էլ ինքը լրացրեց: Աշխէնն ուտելու բան ուզեց. Մարգարիտը Երիսաբէթին յանձնեց արգանակը, թէյը, սպիտակ հացն ու ինքը վազեց ճաշելու:

Կէս ժամից յետոյ նա կրկին եկաւ իւր սպասաւորութիւնն անելու: Եկաւ և բժիշկը. նա Մարգարտին ուրախ ողջունեց և Եղիսաբէթից իմանալով՝ որ նա ամբողջ օրը հիւանդի մօտ է եղել, ասաց. «Ապրիս, Մարգարիտ, կատարեալ հիւանդապահ ես եղել:

— Պարոն բժիշկ, շննջաց Մարգարիտը նրան ճանապարհ դնելիս, դուք մեր տուն էք գնում, չէ՞. խնդրում եմ մայրիկիս ասէք, որ թոյլ տայ Աշխէնի մօտ նստեմ. մեր Պետրոսը հիմա առողջ է, իսկ Աշխէնը պահող-պահ-պանող չունի. կ'ասէք, այնպէս չէ՞:

Եւ Մարգարիտն այնպիսի շողոմքոր հայեացք ձգեց բժշկի վրայ, որ նրա ծիծաղը բերեց:

— Լաւ, կ'ասեմ, կ'ասեմ, խոստացաւ բժիշկն ու գնաց:

Է



Աշխէնը նկատելի կերպով կազդուրւում էր: Մարգարիտն ամբողջ օրերով նրա կողքին նստած էր լինում. մի շաբաթուայ մէջ նա սովորեց զեղեցիկ կերպով ձևել և սոսնձել՝ կառքեր, թնդանօթներ, տնակներ: Երբեմն խիստ յոգնում էր բանելուց, բայց աշխատում էր որ ոչ ոք չնկատի: Այժմ Աշխէնը նոյնպէս օգնում էր իւր խորհուրդներով, ցոյց էր տալիս՝ թէ ինչպէս պէտք է դնէ օրինակը, ինչպէս մաքուր սոսնձի: Դեռ իրան թոյլ չէին տալիս, որ գործ շինէր. բժիշկն ասում էր, որ աչքերը կարող են վնասուել:

Այսպիսով չարչարանքի շաբաթն անցաւ: Աշխէնն արդէն կարողանում էր անկողնում նրստել և Մարգարտի բերած բաներն ախորժակով ուտել:

Մարգարտի մայրն էլ մի-երկու անգամ

եկաւ հիւանդին այցելելու. իւր տնից երբեմն արգանակ էր ուղարկում, երբեմն միս, երբեմն թէյ:

Ջատկի առաջին օրն էր. մէկ էլ տեսնես Մարգարիտը հեալով վազում է. մէկ ձեռքին մի մեծ կողով ունէր, միւսումն էլ քառանկիւնի մի բան: Կողովը Աշխէնի մօրը տալով՝ ասաց.

— Տիկին, ահա այս մայրիկս ձեզ համար ուղարկեց. իսկ այս, Աշխէն ջան, ես եմ քեզ ընծայ բերել. ապա իմացի՛ր՝ ի՞նչ բան է. թղթի տակ մի բան պրպրտում էր:

Աշխէնը հետաքրքրութեամբ նայում էր ամեն կողմից և չէր կարողանում գուշակել: Այդ ժամանակ Մարգարիտը թուղթը չետ քաշեց և հանեց մի վանդակ՝ մոխրագոյն մշահաւ մէջը:

— Քեռիս այսօր այս բերեց ինձ համար. իսկ ես քեզ եմ տալիս, որ տխուր չլինիս. քեռիս սրա համար կուտ էլ է բերել. այստեղ ամանով դրած է, երբ վերջացնի, քեռուս կ'ասեմ՝ որ էլի բերէ: Ո՛ր իմանաս, ի՞նչ չարածձին է. մարդու բերանից շաքարի կտոր է հանում, ուսի վրայ նստում է, խաղում է. մի խօսքով,

բոլորովին ձեռնասովոր է: Սրա անունը Հուպլի է:

Աղջիկները վանդակը բաց արին:

Հուպլին դուրս եկաւ, թեւերը թափահարեց և սկսեց հպարտ-հպարտ ման ու ման անել վերմակի երեսով: Աշխէնը քրքրալէ ծիծաղում էր նրա արարքների վրայ. թռչունը նրա մատների հետ կուռելով՝ ծիծաղու թուլացնում էր. կամ չրթչրթացնում էր, կամ չանկերով խփում ու թեւերը թրթռացնում:

— Դեռ քեզ ուրիշ նոր բան էլ պիտի ասեմ, աւելացրեց Մարգարիտը. — այսօր բժիշկը մեր տանն էր, խոստացաւ՝ որ վաղը քեզ թոյլ կըտայ վեր կենաս:

— Ա՛խ, ի՞նչ լաւ բան է ասել, ուրախ ձայն տուեց Աշխէնը:

— Մայրիկ ջան, լսեցի՛ր, բժիշկն ասել է, որ ես վաղը պիտի վեր կենամ:

Եղիսաբէթն այս լսելով՝ ուրախութիւնից լաց եղաւ:


— Աստուած երկար կեանք տայ, ասաց նա համբուրելով և գուրգուրելով աղջկան. այս բոլոր ուրախութիւնների պատճառը Մարգարիտն է. եթէ սա չլինէր, ո՞վ գիտէ՝ ի՞նչ պատահէր քեզ:

Մարգարիտը կարմրեց և շփոթուած երեսը շուռ տուեց: Բայց նրա ժպտուն դէմքը լեզուի փոխարէն կարծես ասում էր, որ նրա հոգու ներսը այնպէս ուրախ ու պայծառ է, ինչպէս կանաչ-կարմիր Զատիկը:

Աշխէնն առողջացաւ և մի շաբաթից լետոյ սկսեց մօր հետ աշխատել: Այժմ երեկոները նրանց մէկ ուրիշն էլ էր օգնում:

Ի հարկէ, սիրելի ընթերցող, դու իմացար՝ թէ ո՞վ կըլինէր այդ երրորդ հոգին:

Աշխէնը ցերեկները մենակ մնալիս, ալլաւ չէր տխրում, որովհետեւ նրա շուրջը թռչկոտում էր խելօք Հուպլին և ուրախ կատակներով զբաղեցնում:



202.

~~10/11~~

3917
3918
3919
3920

0008448
0008449
~~0008450~~
0008450
0008451

ՀՀ Ազգային գրադարան



NL0008451

ՀՀ Ազգային գրադարան



NL0008450

ՀՀ Ազգային գրադարան



NL0008449

ՀՀ Ազգային գրադարան



NL0008448

2013

